## 27. ՔՐԻՍՏՈՆՅԱ ՄԱՐԹՈՒ ՈՒ ՍԱՏԱՆԻ ԱԽՊԵՐՈՒԹԵՆ

Ժամանակով մեյ խեղճ մարթմ կէլնի, էնա̈ն. ուր կնիկ: Մարթն էլ շատ քրիստոնյա կէլնի: Հմեն օր առաւոու իրիկուն, տարին տսվերկու ամիս կէրթա̈ ժա̈մ, կուգյա, իսկի ուր ժամուց ետ չի մնա: Կիշեր էն գյա̈խ, որ գյուղու ժա̈մ կզա̈նեն. էն կաքխի. կէլնի կէրթա̈ ժա̈մ ուր աղոթքն կանի, չում տերտեր կուգյա̈ ժա̈մ կօխնի: Ժա̈մ առցկվելուց սորա էլ կէրթա̈ խետ ուր սարակութնին, կէրթա̈ խետ ուր ճամալութնին, չում իրիկուն ժա̈մ զա̈րկոցին: Էն գյախ, որ կուգյա̈ ժամ զա̈րկոց, որ մեյ մարթ մեյ մա̈շիթիե տա, ասի՝ մեյ նուկի պա̈ն տար փլան տուն, անկարելի էի, չտանե, կասի.

- Չէ՛, ժամու գյախն ի, ես պիտի էրթամ ժա̈մ, էդա պա̈ն չիմ անի:

Կասին. - Ցնավե՛ր, մաչիթիեն առ՝ մկա էս ա պանն արա, ժա̈մ առատուն կնա̈:

Էն կասի. - Չէ՛, իրիկուն կմնանք անութի. կասենք մկավան խաց թողնինք առատուն ուտենք, որ ժա̈մ թողնենք:

Ըսհա քրիստոսասեր, բարեպաշտ, աստվածասեր մարթ էր:

Էնոր կնիյն էլ շատ ուրախ էր վեր ուր իրկան ա̈րա̈ծին: Ջինքյն էլ շատ ուրախ էր վեր ուր պա̈նին գյոոծին, վեր ուր աստված կանչելուն:

Հմեն օր ըտսնա̈ արուց: Ծատ մնաց, քիչ մնաց, մեկ օր աղոթրնին դուտ իպա̈ց, դուտ քյա̈շեց վերեն, որ էրթեր ժա̈մ, տեսավ մարթմ բիրդսւն կայնավ ինոր ա̈ռա̈ճ:

Ասաց. - Պա̈րի լուս քյե, ախպեր ջան:

Ասաց. - Աստու պա̈րին, խօգյի ջան, վեր իմ գլխուն, վեր իմ աչին:

Ասաց. - Ցյու դի՞ր կէրթա̈ս:

Ասաց. - Տեղ չէ, կէրթա̈մ ժա̈մ:

Ասաց. - Հմեն օր ես քյաւնի կտիսնամ, առատուն իրիկուն կէրթաս ժա̈մ. իսկի օրմ ժա̈մուց չես ինե ետ. էս ի՞նչ բա̈ն ի:

Ասաց. - Ժա̈մուց ի՞նչխ ինեմ ետ, կէրթամ աստված կկանչեմ:

- Է. շատ աղեկ, որ տյու հմեն օր կէրթաս ժա̈մ. աստված կփա̈ռա̈բանես. ես քյեզնից մեկ խարցում անեմ. որ տյու առատուն իրիկուն, տարին տսվերկու ամիս կախվիր ես աստծու փեշերաց. աստծուն կփա̈ռա̈բանես, էս ի՞նչ է կուզես աստծուց:

Ասաց. - Ի՞նչխ ինչ կուզեմ. չե՞ս կիտե ինչ կուզեմ, կսմաթ կուզեմ աստծուց:

- Բարեմ աստված քյի կսմա̈թմ կուտա՞:

- Է՛. փառքյ աստծու. օր քե օր իմ կսմնաթ գյեո կխասուցի. անոթի չենքյ մնա. գյեո էն կանդւսր. շատ ճարստութեն ինչ անեմ:

Ասաց. - Ախպեր ջան. արե ես քյե պնմ ասեմ: Էն օրքեօր կսմաթ որ աստված կուտա քյե. էն փոր չի կշտացուցե. տյու արե ես քյե վաղ առաստուն. էսա գյախ պեռմ ոսկի կառնեմ պիրեմ վեր դռան. տյու դուռ պաց. պեռն ոսկին թալենքյ ներս. տյու. քյո կնիկ ճա կիրեքյ. ախր չուր կիյամաթին չխլսեն. էդա ժամ էրթալ. աստված կանչել թարկի. էն քյե փոր չկշտացուցի: Ի՞նչ ճմեն օր առաստուն աղոթրնին քյաղցրիկ քյուն կխռտնցուցիս. կվազիս տեխ ժամտուն մեյ կտոր խացի խամսր. էն էլ օրմ կէլնի, տաս օր չէլնի:

- Աղե՛կ, - ասաց. - որ տյու ըսկուն աղեկութենմ անես. զաթի տճա աղեկ. ճամա. ժամ էրթալ պետք ի, ժամ էրթալ ի՞նչ ի թարկեմ:

- Չէ՛. - ասաց, - տյու իմ խաբրով արա, ժամ էրթալ թարկի. թե չէ՝ որ չթարկես. էն պեռ ոսկին չեմ իտա քյե:

- Է՜, շատ աղեկ. - ասաց, - ես էլ կուզեմ խանգյիստ ապրել. մա ես չե՞մ ուզե:

Վարճասլ մարթն ճամոզվավ. տսոցավ ետ. տոտ իպան. կնանց ներս էլմ էլ պառկավ քյնավ:

Ծատ մնաց, քիչ մնաց, պառի լիս պացվավ. էնոր կնիկ արթնցավ. տեսավ որ ուր իրիկ էսօր չէլնե վեր էրթա ժամ:

Ասաց. - Ջա՛նմ. էսօր էսա մարթ տիժար՝ չէլնե վեր կնացե ժամ:

Կանչեց ասաց. - Ծո՛. ծո՛:

Ասաց. - Ի՞նչ ի:

Ասաց. - Տնավե՛ր, ուփիշ օր գյուղու ժամ զարկոցին տյու կէրթիր ժամ. էսօր լուսցե, տյու ալա քյնուկ ես, էլի կնա ժամ է:

Էն էլ ասաց. - Էսօր ես չեմ էրթա ժամ:

- Ինչի՞ չես էրթա:

- Չեմ էրթա:

Քիչմ գյախ էլ մնաց, տեսավ որ չէլնե վեր, ճար չկա, ասաց.

- Ջա՛նմ. կա չկա էսօր էսա մարթուն պամ էլեր ի, խիվանդ ի. քյեֆ չունի. էսա ի՞նչ բան ի:

Մեկ էլ կանչեց, ասաց. - Աստված քյո տուն ավիրի. լի կեսօր ի, մեղքյ ի:

Ասաց. - Ջա՛նմ, էսօր ես չեմ էրթա ժամ, մա զոռո՞վ ի:

Կտորմ գյախ էլ մնաց: Կնիյն ասաց. - Որ չես էրթա ժամ. բարեմ էլի կնա գործի:

Ասաց. - Ջա՛նմ, էսօր նա՛ պանելու կէրթամ. նա՛ էլ ժամ կէրթամ:

Ասաց. - Ինչի՞. ի՞նչ էլե. խիվանդ ես, քյեֆ չունե՞ս:

Ասաց. - Չէ՛, ես խիվանդ չեմ, զի պանմ չէլե:

- Ապա ինչի՞ չես էրթա:

- Ջա՛նմ, քյո դավին ի՞նչ ի. ճմեն պան պիտի խասկնաս:

Կնիյն էլ ասաց. - Քյո քյեֆն ի, կուզես՝ ասա, կուզես՝ մ՛ա՛սի:

Պերան խփեց, բաշլայեց ուր չախրակ մանել:

Մնաց չուր մեկէլ օր առաստուն: Առաստուն աղոթրնին ուր ժամ էրթալու գյախ մարթն ուր դուռն իպաց, էլավ տուս: Սատանեն պեռն ոսկին խետ էկավ: Պեռ ոսկին իթալ վեր դռան, ասաց. - Պառի լեռս քյե. ախպեր:

Ասաց. - Ասսու պարին, խազար պարով:

Ասաց. - Դե՛. ծեռ տուր խե զիկ. էսա ոսկու պեռ. յարդում արա, թալենքյ ներս:

Մ՝եյ խատ ծեռ իտուր. որ պեռն վերուցեց. ասաց. - Աստված քյո տուն ավիրեր. գյա՛խն էր ես հողվի:

Ասաց. - Աստված քյո խիմ քյակի. մարթու յարդում բիյա չես կանա անե. ժըմ էրթալուն մենակ հարբաբ իր:

Սատանեն պեռ ոսկին մենակ վերուց. տարավ ներս. իթսըլ տան մեյ պուճախ:

Ասաց. - Ահա. իմ ախպե՛ր, տյու ինան քյո կնիկ. էսա ոսկին կիրեքյ կիրեքյ. չուր Քրիստոս կուգյը տատաստան:

Սատանեն կնգյըն ասաց. - Էղա ի՞նչ ի կանես:

Ասաց. - Չախրակ կմանեմ:

Սատանեն տարավ իպե լունգյ էս իզար. կնգյան չախրակ արաց խող մոխիր: Ասաց. - Դե՛. էյի վեր, խե քյո չախրա մանելուն, կասի՝ չախրակ կմանեմ, տռեմ քյո չախրկին. խե քյո չախրակ մանելուն: Է՛ մնացիքյ պըրի, ախպեր ջան:

- Էրթաս պըրի, ախպեր ջան, շատ շնորհակալ եմ:

Երփ սատանին ասաց՝ շնորհակալ եմ, ասաց. - Պըմ չիմ արե, ալը ի՞նչ իմ արի, աղեկութեն տյու զիզնից նոր պիտի տիսնաս:

Սատանեն կնաց, մնաց իրեքյ չորս օր. չէկավ:

Կնիյն էլ ուր իրկան ասաց. - Մարթ, նա էսա ըպով էր, որ տյու թըրկիցիր էլ ժըմ չես էրթը. նոր մկա խասկցա:

Ասաց. - Կնի՛կ, աստված քյո խիմ չքյըկի. մը էսա քի՞չ ի: Էլ ժը՞մ ինչ անենքյ, աստված կանչել ինչ անենքյ: Դե. հը ինգյի վեր կողիտ. ծըմի, ծըմի, ծըմի չուր ասես՝ խերիքյ:

Կնիյն էլ ասաց. - Ականջ արա, քյե պըմ ասեմ:

Էսա պեռ ոսկին. որ էկավ ինգյըվ քյո ծեռ, էսա ո՛չ ողորմութեն ի, ո՛չ էլ կսմըթ ի. նը կէլնի քյե խամար խաց, նը կէլնի կերակուր:

Ասաց. - Ապա ի՞նչ ի, որ խաց կերակուր չի:

- Իսա, - ասաց. - սատանայական պըն ի, փոր չի կշտացուցի, իսա քյո տուն պիտի ավիրի վեր քյի, տյու չես իմնը, էսա իսնի պըն չի: Ի՞նչ իսան ի, որ ըսկուն հարուստ էյըվ, որ պեռմ ոսկի իպե իտուր քյե: Տյու արե զիկ ականջ ւսրա, քյո ժըմ էրթըլ մի՛ թըրկե: Քյելի էլմ հմեն օր ինչխ կանիր քյո ժըմ պատարաքյ, աստված կանչի. աստծու տված կսմըթ պե ուտենքյ: Էն պեռ ոսկին էլ թո կենա էնտեղ, իսկի ծեռ մի տա, ինի պիտի տիսնաս ի՞նչխ պիտի փճվի էրթը ուրն ուր էղա ոսկին:

Ասաց. - Տո կնիկ, տյու ծու՞ռ ես, ինչի կփճվի: Ըննեմ տարի, ըսնեմ ժամանակ վի՞ր ոսկին ի փճվի, առանց ուտել, որ իմնուն փճվի:

Ասաց. - Աստված քյո տուն ավիրի, ուրիշներու ոսկին որ կա՝ աստծու տվածն ի, էն ապով չփճվի. էսա սատանի մալ ի, ուրն ուր կփճվի կէրթը:

Ասաց. - Դե գյնա, շուն գել, տյու եէլ ինե քյո խելքյին:

Ասաց. - Աղե՛կ. մարթ, գյեռ ես խըքըրմ էր քյե ասի, թե որ չփեռշմնար, իմ վիզ մաշի քյո ըռըճ կտրի, իմ արուն քյե խըլըլ:

Ասաց. - Կնը՛, կնը՛ խե քյո քյործին. ես կիտեմ, որ քյո սիրտ քյո չախրկի խամար կցավա: Հմենի ոսկին չփճվի, իմ պիտի փճվի, իմ խելքյ մարթու խելքյ ի, քյո խելքյ կնգըն խելքյ ի:

Մնաց չում իրեքյ չորս օրից սորա Սատանեն էկավ, ամա մարթն չկիտե, որ էղա սատանա էի:

Էկավ ասաց. - Պըրև քյե, ախպեր ջան:

Ասաց. - Աստու պըրին, խո՛գյի ջան:

Ասաց. - Ի՞նչխ ես, քյո քյեոփն, քյո ճալ:

Ասաց. - Աղե՛կ եմ, քյեոփ իմ քյեոփն ի, տյու անուշ կենաս:

Սատանին խարցուց ասաց. - Տյու ի՞նչխ ես, քյո քյեոփ. քյո ճալ ի՞նչխ ի էս օրեր:

Էն էլ ասաց. - Էյ տնավե՛ր, քյե պես ախպեր որ անուշ կենա, սաղ կենա. քյեոփն իմ քյեոփն ի, զիկ ի՞նչ դարդ մնուխ:

Սատանեն ասաց. - Ախպե՛ր, մենքյ ի՞նչ անենքյ:

Նստան խորոր տվին, խարց փորց արին մեջ մէ մեկէլու:

Մարթն էլ ասաց. - Տյու կիտես՝ ի՞նչ անենքյ. տյու չանքյ զիկ կիտնական ես. չանք զիկ աղեկ ես:

Ասաց. - Ես քյե պսւմ ասեմ. իմ խաբրով կանե՞ս:

Ասաց. - Տնաշեն, ապա ես քյո խոսքրից տու՞ս կէլնեմ:

Ասաց. - Ես քյե շատ կուզեմ, արե մե մեկէլու ախպերագյիրմ տանքյ. էլնենքյ ախպեր. ըսկում էլնենքյ ախպեր. մե մեկէլու սիրենքյ. որ խալալ ախպերութեն էլ ըսկուն չի:

Մարթն էլ ասաց. - Ծա՛տ աղեկ, զի կանիս քյե ախպեր, ես զաթի առաջանքյ եմ: Գյիրիցին թխթեր, տվին մե մեկէլու, էրտյում արին, էլան ախպեր:

Սատանեն ասաց. - Ախպե՛ր. մկա ես տյու էլանքյ ախպեր. պետք ի քյործմ կնղնենքյ, անենքյ մեյ տեղ:

Մարթն էլ ասաց. - Ի՞նչ քյործ սնենքյ:

Սատանեն ասաց. - Ի՞նչ պիտի անենքյ. ոսկի արծաթ զի բոլ կա. ես քիչմ մալ-ապրանքյ կառնեմ, կէլնենքյ օրթաղ. կնստենքյ դուքյան. առտուր կանենքյ:

- Է՛, շա՛տ աղեկ, - ասաց, - որ տյու մալ ապրանքյ առնես, պետք է կես փարեն էլ ես տամ:

Ասաց. - Չէ՛, ամենին էն փարեն ինչ ես տվիր եմ քյե, էն զաթի. քյե ճանձնական ի, ծե խամար ի, ուտելու խամար ի, տյու էնան քյո կնիկ կիրեքյ. իսկի մեյ փարա քյո փարից մի պիրե:

- Է՛. աղեկ, շնորճակալ եմ, որ ըսճա եի:

Սատանեն ասաց. - Մնացիր պարի. - կնաց:

Մալ-ապրանքյ առեց. ելից դյուքնի մեջ, մեկ էլ օր էկավ մոտ ուր ախպեր ասաց. - Ախպե՛ր:

Ասաց. - Ի՞նչ ի:

Ասաց. - Ես գյետ դյուքյան պռնիր իմ, մեջ ելին ապրանքյ իմ արե: Արե էրթանքյ ըստրիս նստենքյ առտուր անենքյ:

- Ծա՛տ աղեկ. քյելի էրթանքյ:

Թև տվին թիվի. կնացին նստան դյուքյան. սկսեցին առտուր անել:

Ծատ մնաց, քիչ մնաց, մեյ խինգյ-վեց ամիսմ, մեկ օր սատանեն ասաց. - Ախպե՛ր:

Ասաց. - Ի՞նչ ի:

Ասաց. - Էսա առտուր, որ մենքյ կանենքյ, զեռով տաս-տասխինգյ ոսկի մե քյար վաստակ կէլնի, էն քիչ ի, չէլնե:

Ասաց. - Ապա ի՞նչ անենքյ:

Ասաց. - Էլնենքյ մեր դյանգյեր կապենքյ. քիչմ էլ մալ-ապրանքյ առնենքյ, պառնանքյ ճորին. ինինքյ աշխար թյուջրութեն անենքյ:

- Ծատ աղեկ:

Խոսքյեր արին մեկ. էնոնց դյանգյեր-մանգյեր կապիցին, որ մեկէլ օր առատուն խեն ճամբանխ:

Էն իրիկուն կնիկ ասաց ուր իրկան. - Ծո՛ մարթ. էսա մեյ խոսքն էլ քյի կասիմ, որ քյո մեխքյ իմ վզից էրթայ. ըստրիս տյու կիտես. ինչ կանես՝ արա:

Ասաց. - Ի՞նչ ի կասես, կնի՛կ:

Ասաց. - Էսա մարթ որ էլերի քյե ախպեր. էն թշնամի եի, քյե պիտի տանի էն կուրիսցուցի: Արե մա՛նե. մէ՛յնե. մէ՛րթա խետ էն սատանին. ծեռ քյաշի մոտեն, ասա՝ ես չեմ կանա գյա. պոծանքյ. կնաց:

Մարթն էլ ասաց. - Տո՛ կնիկ. աստված քյո խիմ քյակի, որ էն սատանից եի. էսա կանդար ոսկին որտեղե՞ն իպի. էսա կանդար մալ-ապրանքյ որտեղի՞ց առեց:

Կնիյն էլ ասաց. - Սատանի մոտ ի՞նչ կա պակաս. որ մալ-ապրանքյ, ոսկի արծաթ պակաս էլնի:

Էն էլ ասաց. - Տո տնավե՛ր, սատանին ոսկի յու՞ստի:

Ասաց. - Մա՛րթ. տնավեր, տյու ավետարան չես կարդացե, զա չես կիտե: Էն ինչ որ աստված սատանին անիծեց, Քրիստոս իշխանութեն իտուր սատանեյներաց. որ սատանեքյ ինչ անեն՝ անեն, էնոնքյ ոսկի էլ կստեղծեն, արծաթ էլ կստեղծեն, մալ էլ, ապրանքյ էլ կստեղծեն: Հմեն պան էլ կանեն, ամա մեյ թախկվան մեջ կփճցուցեն:

Ասաց. - Մենքյ ախպերագյիր ենքյ, էլ չենքյ կանա մեյ մեկուց ծեռ քյաշե, մեր երթումն էլ չենքյ կանա ուտե:

Ասաց. - Քյո քյեֆն ի. կփեռշմանես:

Էլավ պառկավ. քյնավ չուր առատուն: Աղոթրնին սատանեն դուռ թփեց:

- Պարի լոս քյե, ախպեր ջան:

- Ասսու պարին:

- Քյելի էրթանքյ մեր խան. մեր պեռներ պսռնսւնքյ, էրթանքյ ննգյան ի:

Կնացին խանի դուռ. ճորիքյ քյաշիցին տյուս. պեռներ պառցին. ինգյան ճամբան, կնացին: Ծատ կնացին, քիչ կնացին, Ստամբուլա քյաղաքյ տյուս էլան, մեկ էրկու տարի ուրենց թյուջրութեն արին էնտեղ:

Մեկ օր ասին. թակավորի սադրազամ մեռավ: Թակավորու մաջլիս նստավ սադրազամ որոշելու խամար, վի՛ր անենքյ. վի՛ր չանենքյ, ըսկուն կանոնավոր մարթմ չկա, որ անինքյ սադրազամ:

Սատանեն ախպոր ասաց. - Ախպե՛ր, արե ես քյե պան ասեմ: թակավորու սադրազամ մեռեր ի, մաջլիս նստի որ սադրազամ որոշի, արեյ տյու զիկ ականջ արա. էս էրթամ թակավորի մաջլիսի մեջ էլնեմ վազիր, քյե խամար էլ խաբար տամ թակավորուն, թե իմ ախպեր շատ ճավատարիմ ի. շատ էլ ճարուստ, կատարյալ մարթ ի, պե արա քյե սադրազամ, քյե կամենամ ըսնա արե՝ էլի սադրազամ:

Ասաց. - Ախպե՛ր, յանե, կանե՞ն սադրազամ զի, ըսկուն պան կէլնի՞:

Ասաց. - Տնավե՛ր. էն պան որ ես կանենամ՝ գլյոխ չէրթա՞, խելա՞ց պան ի:

- Է, ջատ աղեկ, ես կաբուլ կանեմ. ճամա էսա մեր մալ-ապրանքյ, մեր դյուքան էլ վո՞վ պիտի նստի թյուջրութեն անի:

Ասաց. - Ջա՛նմ, էն թող կենա դա. ծառամ կպռնինքյ ամսականով, թող առտուր անի:

- Է՛, շատ աղեկ, ինչ որ ասիր՝ իմ ընթունածն ի:

Սատանեն էլավ ձեռքըմ խորոտ. սյուսլի խալավ խսւգյավ. կնա̈ց թակավորու մա̈ջլիսի մեջ. ասաց. - Էսա ի՞նչ սաջլիս ի, ի՞նչ բան ի:

Էնոյնն էլ ասին. - Թակավորու սադրաւզա̈մ մեռեր ի, վագիր էլ խալիվորցեր ի. մկա վա̈զիր սա̈ղրա̈զա̈մ կորոշեն:

Նստավ էն տեղ աֆա̈ղմ, քվե թալիցին. տեսան, որ մա̈ջլիսի մեջ հմենից խորոտ, քյա̈միլ կատարյալ մարթ սատանեն էր. քվեն տվին սատանին, ամա չին կիտե, որ էն սատանա էր: Էնոնքյ կասին, թե վով կիտի վո՞ր թակավորու լաճն ի, իկե էսա տեղրանքյ փոալու. մեր մա̈ջլիսին ռաստ էկավ:

Վա̈րհասըլի տարան պիրին, սատանին արին թակավորուն վա̈զիր:

Մա̈ջլիս մնաց չուր էմեկել օր:

Վա̈զիր խարցուց ասաց. - Թակավոր ապրած կենա, էս ավուր մա̈ջլիս ի՞նչ պա̈նի խամար ի:

Ասաց. - Էս ավուր մա̈ջլիս սա̈ղրա̈զա̈մ որոշելու խամար ի:

Ասաց. - Թակավոր ապրած կենա, թե որ քյի պա̈մ ասեմ, կա̈բուղ կանե՞ս:

Թակավորն էլ ասաց. - Թե որ խելքյի խա̈բա̈ր էլնի, հա̈լբա̈թ պիտի ականջ անեմ: Չյունքյի ըսհեմ ժամանակ ես իմ վա̈զիրի ասած գյետին չիմ դրե, դհ՞ր քյո խա̈բա̈ր գյետին դնեմ:

Ասաց. - Թակավոր ապրած կենա, զի ճոչ ախպերմ կա, ես պստիկն եմ. որ զիգնից զատ զա̈նգյին ի, շատ էլ կատարյալ ի, ինոր պես պիտու, հավատարիմ մարթ չկա: Դյունեն կա̈ն գյա̈ս. ինոր պես հավատարիմ մարթ չես կանա կնդնե, պե ինոր արա սա̈ղրա̈զա̈մ:

Թակավորն էլ ասաց. - Դեմաքյ դյուքյ էրկու ախպեր էքյ:

- Այո՛, - ասաց, - թակավոր ապրած կենա. մենքյ էրկու ախպեր ենքյ. ամա իմ ճոչ ախպեր շատ կա̈տարյալ մարթ ի, կիտե՞ս:

Ասաց. - Ցյու ո՞ր տեղեն էքյ:

Ասաց. - Մենքյ Ծեխ իսլամ թակավորու լաճերն ենքյ:

Ասաց. - Ապա ինչի՞ եէքյ իկե ըստեղրանքյ, էսա կարիքութեն կան կուգյա̈քյ:

Ասաց. - Թակավոր ապրած կենա, մեր խեր մեծ թակավորմ էր, ամա ի՞նչ կա̈նդա̈ր որ թակավոր էլա̈վ, երբ մեր խեր մեռավ, մենքյ էլ նա̈լա̈թ տվինքյ էն քյա̈ղքյի իրես. էրկու ախպրով ինգյա̈նքյ երկիրներ թյուջրութեն, էսա տեսակով էկանքյ խասանք չուր ըստեղ:

- Է՛, ջատ աղեկ, քյո ախպեր մկա դհ՞ր ի:

Ասաց. - Տուն ի. թակավոր ապրած կենա:

Ասաց. - Վոր ըսկուն ի, ըտսնա կատարյալ հավատարիմ ախպերմ ունես, էսօր շուտմ ջույա̈բ ճամխի. թո վա̈ղ գյա̈, մա̈ջլիսի մեջ նստի, որ անենքյ սա̈ղրա̈զա̈մ:

Ասաց. - Թակավոր ապրած կենա, կուզես մկա ջույա̈բ ճամխեմ թո գյա̈:

Թակավորն էլ ասաց. - Չէ՛, մկա չէլնի, ա̈նգյա̈ն ի:

Վա̈զիր սատանեն խա̈բա̈ր ճա̈մխեց ախպոր՝ առատուն շուտ արե:

Մնաց մեկէլ օր առատուն դռներ-մռներ բիթուն փա̈կեց, պալնսներ տվեց ծառային, ուր խալվներ փոխեց. էկա̈վ թակավորու քյոշկ-սարեն:

Սատանեն շուտմ կնա̈ց տիմա̈ց, ասաց. - Պա̈րի լեոս քյե:

Ասաց. - Աստծու պա̈րին:

Ասաց. - Ես քյե կամեցեր եմ, որ էսօր քյե անեն սա̈ղրա̈զա̈մ, խորոտ հա̈զր կաց:

- Աղեկ. - ասաց:

Հազրվավ չուր կեսավուր գյան մաջլիս ծողվոտվավ նստավ:

Քվե թալլիցին՝ հա էսոր, հա էնոր, կնաց էկավ. թակավորն էլ, վազիրն էլ, վուզյելաներն էլ. բիթուն քվեն տվին սատանի ախպոր, արիցին սադրազամ:

Ծատ մնաց, քիչ մնաց. մեկ էրկու տարի. սատանի ախպերն էլ շատ հավատարիմ էր ուր քործի խետ: Թակավորն էլ շատ խավնավ:

Թակավուրոն էլ սրծըթե, ոսկուց թասմ կեր. որ երփ մաջլիս կնստեր թե դիվնի մեջ, թե մաջլիսի մեջ. թակավոր մենակ ուր ոսկե թասով ճյուր կխմեր:

Օրմ սատանեն ուր ախպոր ասաց. - Տղա՛. ակսանջ արա քյե պան ասեմ:

Ասաց. - Ի՞նչ, ախպեր:

Ասաց. - Տնավե՛ր, էն ոսկու թաս. որ թակավոր հա ճյուր կխմի. մարթու պերան իսկի չդեպնե ինե, էն ոսկի թաս շատ թանկագյին ի. սնգյին ի: Դյսխմ չես կա՞նա գյողնաս, դնե քյո ջեռք:

Ասաց. - Ախպե՛ր. էտասնա սյամ կէլնի՞:

Ասաց. - Ինչի՞ չէլնի. ըսկուն խորոտ կէլնի. ինչխ եղ լցեն վեր փլավին ուտեն:

Ասաց. - Ախպեր. ջանմ, գյեռզում, էսա էրկու իրեքյ տարի եի. տհւ վազիր ես. ես էլ սադրազամ եմ. տյու եէլ հավատարիմ ես, ես էլ. էտասնա պան չուր էսօր նա ես եմ արե, նա տյու ես արե. էսօր որ տսնա պամ անենքյ, ի՞նչխ կէլնի. թող զէն տյու զի էն կանդառ գյեռվացիր. չում թակավորու աչքն մտուցիր. մեկ էլ թակավոր ուր իշխաներաց. վիզյելաներաց հա կգյեռվա զի. կասի, իմ վազիր ըսնա հավատարիմ ի, ըսնեմ կատարյալ ի, ըսնեմ քյամիլ ի, էնոր պես պիտա մարթ չկա, ես էսօր որ տսնա գյողութեն անեմ. տյու որ զի էդա կանդառ գյեռվացիր իր պիտի ամչնաս. էն գյան տյու եէլ անպատիվ կէլնես, ես էլ:

Ասաց. - Չէ՛, ամենեվին. էտաս ընա պան մի մտածի, վո՞վ կիտի տյու ես գյողցե, տնավե՛ր:

Ասաց. - Ախպե՛ր, որ ես առնեմ. մաջլիսի մեջ խազառ աչք կա. մեյ չտիսնա, մեյն կտիսնա, էն գյան թակավորուն պիտի ասեն, յա պիտի կախի զի, յա պիտի զի ճոչ պատիժմ տա, ախր:

Սատանեն ասաց. - Որ ըսկուն ի. որ տյու շատ կվախենաս, չես կանա, կասես թե՝ կտիսնան. ես կախտիկ ծեռաց տկով ըսկուն կընցուցեմ քյո ծոց. որ մեկ իսան չտիեսնա:

Էն էլ ասաց. - Աղե՛կ, ախպեր, թող քյո խաբառ էլնի, համան ես վախենամ իմացվի. ըստրիս տյու անպատվես, ես քյո դարդն եմ, իմ դարդ չեմ ապա:

Ասաց. - Չէ՛, տյու զիզնից իսկի մի վախենա. ամենևին:

Ասաց. - Ախպե՛ր. պամ էլ ես քյե խարցուցեմ, տյու ինչի՞ չես առնե պախի քյե խամար, կուտաս զիկ:

Ասաց. - Տնավե՛ր, ես քյե զիզնից ջատ կուզեմ, զի զաթի հմեն պան կա. կուզեմ, որ հարստութեն քյե էլնի: Տեսա՞ր, որ էն կանդառ ոսկին ես տվի քյե, զի ի՞նչ պակասի:

- Է՛, շատ աղեկ. ախպե՛ր, ջնորհակալ եմ:

Մնաց մեկէլ օր թակավորու մաջլիս նստավ: Մաջլիս կես էլավ թե չէ, գյախտիկ սատանեն թասն առեց ընցուց ուր ախպոր ջեռքի մեջ:

Մաջլիս ցըվրվավ. մնաց չյուր էմեկել օր: Էմեկել օր կեսօրին երփ մաջլիս նստավ, թակավոր մաջլիսի մեջ բիրդան ծարավցավ:

Ասաց. - Մեյ ճյուրմ պիրեքյ ըստեղ:

Վյուրգյելաներ ասին. - Թակավորու ոսկե թաս ո՞ր տեղն ի. չէրևա. որ ճյուր տանքյ թակավորուն:

Շատ փտռիցին, չկնդան: Սադրազամին խարցուցին. վազիրին խարցուցին, ղսոր ասին, էնոր ասին, բիթուն էլ ասին՝ մենքյ խաբար չենքյ. չենքյ կիտե:

Թակավոր ջուաբ ճամխեց ուր կնգյան, թե իմ ոսկե թաս տյու չե՞ս տիսե:

Կնիյն էլ ջուաբ ճամխեց. - Չէ՛, ես խաբար չեմ:

Մեկ էլ ջուաբ ճամխեց ուր ախչկան: Ախչիյն էլ ուր կառավաշներաց խարցուց, թե՝ խորս ճյուր խմելու ոսկե թաս կուրի, չեքյ տի՞սե:

Բիթուն էլ ասին. - Չէ՛. մենքյ խաբար չենքյ և չենքյ տիսե:

Վարհասալի դհր խարցուցին մարդ սալախ չի տու:

Թակավորն էլ շատ մտածեց վեր էսա պանին, էսա կյանդար ժամանակ իմ քյեռշկ սարից, իմ մաշլիսից պամ չէր կուրիսե, էսօր ի՞նչ բաս ի ակջեքա, կա, չկա գյող մի փայղա էլե մեջ իմ քյեռշկ սարին:

Մնաց մեկէլ օր, որ մաշլիս նստավ, վազիր կնաց մո թակավոր, ասաց. - Թակավոր ապրած կենա, քյե ի՞նչ ի կուրիսե:

Ասաց. - Իմ ոսկի թասն ի կուրիսե, որ ես էնորով ճյուր կխմի. չե՞ս կիտե:

Ասաց. - Թակավոր ապրած կենա, էլ ուրիշ պան չկուրիսե՞:

Ասաց. - Չէ՛, ինչ որ կուրիսի. ես էն կասեմ, բեբախտութեն չեմ անե:

Ասաց. - Թակավոր ապրած կենա. ես կիտեմ քյո ոսկե թաս վո՞վ ի տարե:

Ասաց. - Վո՞վ ի տարե:

Ասաց. - Քյո ոսկի թաս քյո գյեռվածուրիկ սադրազամն ի գյողցե, որ տյու հմեն օր հար քյաշի առաճ գյեռվիր, թե ես ղսհա սադրազամ չեմ տիսե, էսա էր քյո հավատարիմ սադրազամ, խող-մոխիր վեր ուր կոտին, էն արած որ էն արաց, մեկ իսան մեջ ուր կյանքին չէր արե:

Թակավորն էլ ասաց. - Վազի՛ր, թե առճի տիր տյու գյեռվացիր, մտուցիր իմ աչք:

Վազիրն էլ ասաց. - Տյու չտեսա՞ր, իրեքյ տարի եէր, որ էն սադրազամութեն կաներ քյո առաճ, տյու մեյ կեղտութեն վեր էնոր տեսա՞ր, չանձ էն քյասմիլ. չանձ էն կատարյալ մարթ չէ՞ր, թե առաճ թե էսա իրեքյ տարվան հաշիվ, էն ուր մորմեն ծնիր էր չուր մկա ես էնոր վերեն մեյ կեղտ չեմ տիսե: Էսա մկա չեմ կիտե, սատանեն մտավ ինե, ի՞նչխ էլավ: Մկա էնոր գյողութնի պատիժն ի՞նչ ի:

Թակավորն էլ ասաց. - Մեյ քյանի տարի պռնատուն լազմ ի:

- Տո թակավոր ապրած կենա, էն պռնատան պա՞ն ի, որ տյու կասես տնինքյ պռնատուն:

Թակավոր ասաց. - Ապա վազի՛ր, ի՞նչ պատիժ պետք է էնոր:

Ասաց. - Որ իմ կարճ խելքով անես, էնոր կախաղան լազմ ի, էն արած որ էն արաց:

- Աղորթ, կախաղան պետք ի:

- Խա՛, պետք ի կախեն, որ էնոր չկախես. թակավոր ապրած կենա, վաղ ես էլ պամ կգյողնամ, ուրուշներ էլ պան կգյողնան:

Թակավորն էլ ասաց. - Ջա՛նմ, քյանի որ էն մարթ հավատարիմ կատարյալ էր էսա կյանդար ժամանակ, ափսոս ի, որ ես կախեմ:

Վազիրն էլ ասաց. - Տյու կախի, որ էլնի գյինդ մաշլիսի մարթերաց խամար:

Մնաց մեկէլ օր մաշլիս նստավ:

Թակավոր էկավ մաջլիսի մեջ. ասաց. - Ի՞նչ անենք, ի՞նչ չանենք:
Սնդրազամ կւսնչիցին. պիրիցին մեջ մաջլիսին:
Վազիրն ասաց. - Թակավոր ապրած կենա, մաջլիս բիթուն թող վկա էլնեն, որ ես էսա տեղ էս ջնղմմաթի առաճ. թակավորու ճուր խմելու թաս սադրազամի ջեռքեն խանեմ: Ջաղամաթ. աչքեր պացեք. խորոտ թամաշա արեք, որ չէլնի թե ծեզնից մեյն ասի՝ վազիր ուր ջեռքից թասն իխան. թալեց վեր սադրսզամին:
Կնաց սադրազամի կուշտ նստավ. թաս ջեռքից իխան տուս: Սադրազամի բեղեր պռնեց թքյեց մեջ իրիսին:
- Թու՛. - ասաց. - մեջ իրիսիտ. անամոթ, չե՞ս ամչնա, մարթ իսա կսնդմր տարի թակավորու առաճ հավատարիմ քյամիլ սադրազամ էլնի, մկա ըսհա խա՞լթ կանի: Ես քյե էն կմնդմր գյեռվացի. չուր քյի թակավորու աչք մտուցի. ասի՝ իմ ախպեր ըսհա էի, ըսսնայի. թակավորն էլ էն կմնդմր քյե գյեռվաց, որ բիթուն վյուքյեալաներաց աչք մտուց. համան էսօր տյու ըսկուն խալթմ արիցիր. որ բիթուն էլ մեյ պենով գյիտին կթողնեն, մեջ իրիսիտ կթքյին:
Թաս տարավ իտու թակավորու ծեռ. ասաց. - Էսա քյո ոսկե թաս, էսա քյո գյող: Ի՞նչ կսւմես արա:
Մաջլիս շատ զրուցին, տարան պիրին, թե ի՞նչ պատիժ տանք սմդրմզմմին: Թակավոր վմզիր մեյ պերան սսին՝ կախաղան պիտի խանենք:
Թակավոր կանչեց մեծամեծ զաբիթներ, բիթուն, կանչեց քյաղքյի շատ զմնգյիյհտեր, ճոչ մարթեր՝ թամաշա անելու խամար. սմդրազամ պիտի կախեն:
Հրաման արաց ջմլսւտներսւց՝ սմդրազմմ վերուցե՛ք կախեք:
Զալկիով, սազով, երքերով, եղանակներով կախաղան խանիցին սմդրմզմմին:
Սատանեն էլ ինչ արաց. ուր վմզիրությնից գյմխտիկ տյուս էլավ, չյունքյի սատանա եէր. մարթ չէր կիտե ի՛նչ կաներ, ի՛նչ կէլներ: Կնմց ուր վսւզիրությնի խալվներ իխան. փոխվավ. քիչմ կեղտոտ խալավ խագյավ, փարատիկ ճինջոտ շորեր խագյավ. քիչմ էլ խին լակաշ-մակաշ, ուսկոր, ցան, փմյեն կախեց ուր կող կշտից. էդա սյլսւշեբ օրնակով էկավ կայնսւվ ուր սխպոր աչիչ մռմճ: Ախպեր էլ ճելան ճելան կէրթմ կուգյա:
Սատանեն ասաց. - Խողեր, մոխրներ վեր կոտիտ. էսմսնա գյեռ քյե կխապեն, քյո տուն կավիրեն. տյու քրիստոնյա մարթ իր, տարին տսվերկու ամիս ժամ պատարաք չիր թողնի. ես էկա քյե խափիցի, պեռմ ոսկի տվի քյե, քյե արի թյուջսւր խե զիկ. վերճ արի թակավորուն սմդրմզմմ. քյե խապիցի թակավորու ոսկի թաս խճիցի քյո ջեռք, չում քյե կախել տվի: Աստված քյո խիմ քյակի, տյու չմտածիցիր, թե ի՞նչ մարթ ի, որ մեյ պեռ ոսկի կպիրի կուտա զիկ: Թող էն քյո կնիյն էլ քյե ասաց՝ էն մարթ սատանայ եի, էնոր մալ, արծաթ, ոսկին սատանայական ի, պիտի փճվի էրթա, ախր տյու չավտացիր քյո կնգյմնն: Կիշեր ասաց, ցերեկ ասաց, ախր ճարմ չէլավ խե քյե. և տյու չամոզվար քյո կնգյան խմբրին, չյում էրթմլու իրիկուն էլ քյե ասաց՝ էն մարթուց ծեռ քյաշի, որ չքյմշես. փեռշման կէլնես, ամա տյու ականջ չարիր քյո կնգյմն խմբրին: Ինգյսւր իտև չար սատանին, չում քյո տուն ավիրվավ վեր քյե, քյո կնիյն էլ քյե ասաց. - Քյո մեխք քյո վիզ, քյո մուր քյո ճակատ:
Սատանեն մեյ թարաֆից կասի էսա խմբմրներ, մեյ կողմից էլ ծափ կզ...ի կծծղա:

Էլն կախուկ մայթ մեկ էլ իրիշկաց, տեխ սատանեն երբ վէդոր փարուշան ճալ տեսավ, լակաշ-մակաշ կախե իկե՝ ճեյ ճաք ասաց, նոր էլե սատանա, իմ տուն տեղ վեր զի ավիրեց, իմ կյանքյ վեր զի վերճացուց նոր ուր սատանութեն զի ճայտնի արաց: Կնաց էլ օքուտ չունի: Էսա խաբար ասաց, խոզյին իտուր:

Սատանեն էլ էնտեղից կոռծանվավ կնաց:

Էնոր պեռ ոսկին էլ որ տվիր էր էն մարթուն, էնոր կնիկ օրմ էլավ ոսկու պերան իպաց, իրիշկաց, տեսավ, որ բիթուն էլ տառցիր էր փմյեն:

Էս ռսնա վերճացավ սատանայական ախպերութեն:

